Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2015 թ. նոյեմբերի 20-ին կայացած թիվ 4 նիստի

Օրակարգում՝

- **Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը**
- **Ընթացիկ հարցեր**

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 35-ը:

- **Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ.Վարդևանյանը, մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ. Թռչունյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Ս.Գ. Նանագյուլյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., դոցենտ. Մ.Ս.Առաքելյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ., Ն.Ա.Հովհաննիսյանը: Նրանք ներկայացրեցին 2014-2015 ուս, տարում հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների կատարած աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են պլանով նախատեսված աշխատանքները և ամբիոնների կարծիքը ՝ ատեստավորել հետևյալ ասպիրաններին և հայցորդներին.

- Անուշ Ստեփանյան՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Նելլի Գրիգորյան՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Տաթևիկ Շահբազյան՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ

- Մարինե Հարությունյան՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Անուշ Ասատրյան՝ կենսաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Ժաննա Մուխայելյան՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Մարիետա Միքայելյան՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Կարինե Հարությունյան՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ
- Անի Սաղաթելյան՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ
- Անուշ Բաբայան՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ
- հայցորդ Հարություն Սարգսյան՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ
- Աննա Հակոբյան՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ
- Մարինա Դալլաքյան՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Անի Մկրտչյան՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- Գրիգորյան Աննա՝ կենդանաբանության ամբիոնի հայցորդ
- Աննա Սիմոնյան՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ
- էլիզա Ծովյանի՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար կենսաբանության ֆակուլտետից թեկնածուների առաջադրման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով «Կենսաբանություն» մասնագիտացման մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Սոնա Վարդանի Գալստյանի բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը հասարակական աշխատանքներին՝ «Լավագույն ուսանող 2015» մրցանակաբաշխությանը կենսաբանության ֆակուլտետից առաջարկել նրա թեկնածությունը:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի համակարգող՝ Ա.Ֆ.Կարապետյանի զեկույցը: Նա նշեց, որ 2015-2016 ուս. Տարին ավարտական տարի է 2011-ի սեպտեմբերից մեկնարկած ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա ծրագրի համար: Ծրագրի արդյունքների ամփոփման համար հիմք է լինելու ԵՊՀ ռեկտորի հրամանը ծրագրի կատարումն ապահովելու մասին: Ա.Ֆ.Կարապետտյանը մանրամասն ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետից որակավորման բարձրացման ծրագրի մասնակից դասախոսների հավաքած կրեդիտները:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան